Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ՄՀԵՐ

Ա 55.15 / 1705
85.99
Ն-75
հատուկ մեջ, Հայ.
Սասնա Քրեր.

1/X	2/X	533
10/III		666
2ԱԹX2		651

811.7846

891.99
Ի-75

Ա.Վ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ՍԱՍՈՒՆ ՍՐԵՐ

ՎԻՊԵՐԳ

Ա 5515
+405

«ԳԵՂԱՐՎԵՍՏ»
ԵՐԵՎԱՆ • 1938

ՍԱՍՄԱ ՄՀԵՐ

ՎԻՊԵՐԳ

ԱՌԱՔՉԻՆ ԴԻԼՄԻՆ

Յելավ քաջ Դավիթ՝ իշխան Սասունա,
Կըռիվ խոյացավ ի Մսրա վըրա։
Ու նրա յետնուց Խանդութ մեծ Տիկին
Լիր-լրումն առավ,
Լուս աշխարհ բերավ
Մեկ արու զավակ՝ տեր ու ժառանգին
Զոջանց աթոռքին, Սասմա աշխարքին։

Ու հնուց ավանդ սուրբ սովորութքով
Ժողվեցան յիկան Զոջանց Տան պետեր,
Մանկան բարուրի բինդերու փոխան
Գութանի շղթան փաթթեցին վրան,
Ու ասին իրար Աղնանց ավագներ,—
«Թե կոտրեց տղան կապանքն յերկաթին,
Նա աղատ կուզե ու կրնա ձեռնել,
Նա մեր ցեղեն ե՝ առյուծ հոր վորդին»։

Մանուկն եր. ճըչաց, ճըկեց ձեռն ու վոտ,
Կոտրեց շղթայի ամեն հոդն ու զոդ։

Համբավը տարան կովի դեշտ՝ Դավթին.
Ու պատգամ ճամբեց Դավիթ Խանդութին.

«Իմ ակն-արեգակ հորքս անունով
Իմ կորյուն վորդուս
Կանչեցեք Մհեր.
Նա պիտի դառնա մեր աշխարհին տեր,—
Ով զյերկաթն խշխե, խշխանն ե մարդուս»։

Ու չար որն հասավ՝
Մահացավ Դավիթ՝ դյուցազն-առյուծ,
Մահացավ Խանդութ սրտի կսկիծուց.
Մնաց վորբ-մանուկ, անհեր ու անմեր
Իրենց մեկ հատիկ զավակը՝ Մհեր։

Ու Դավթի լեղբայր, ճնճղափորիկ,
Յելավ, տիրացավ Սասման անառիկ.
Տեր դարձավ Դավթի գանձին ու կայքին,
Վոր պահե, շահե Սասմա ժառանգին։

Մհեր թեև դեռ տղա յեր տակար
Իրեն ուժի տեր Սասուն մարդ չկար։
Հոր նման պարթև, աչքերն՝ ակն-արեվ,
Հայացքն՝ արծվենի, ճակատն՝ արքենի,
Մազերը՝ բոց-հուր,
Մեջքն ու բազուկներ՝ պողպատիկ ու կուռ,
Յոթ մարդու կերը կուտեր մեկ ժամով,

Ով տարավ կ'աճեր՝ նա կ'աճեր ժամով,
Վեռ եր բնությունքը, խրոխտ ու ըմբոստ,

Հրով, խանդով վառ.
Զայրույթի պահին՝ մթար ու մլար,
Հանց վոր Նեմրութ սար։

Սասմա սեպ սարեր վոտներն անդունդին,
Գլուխն՝ յերկնքին, ամպին ու շանթին,
Կը վազեր Մհեր շանթի յետևեն,
Փեսաուր կ'պոկեր արծիվի թևեն։

Հորեղբայրն ասավ Մհերին մեկ որ.
«Գյոդի հոտաղներ կերցըրին բոլոր
Մեր հանդն ու ածու. գընա, ակը տու,
Բան արա, վորդի, պարապ մի նստի։

Ու կելներ Մհեր առավոտ-լուսին,
Կը կապեր ուսին
Գոմշենի մաղախ՝ հացով ու թացով,
Կերթար ժուռ կուգար Սասմա դար-դուրան,
Կը հսկեր Սասմա հանդ ու հանդաստան։
Սասմա դար-դուրան՝ ադրյուր հազարան,
Նման սուրացող սեղ առյուծներուն՝
Բաշերն արծաթի՝ վուռած քերծերուն։

Կը թիկներ Մհեր աղբրանց ակին,
Վաղջ հացը կուտեր մեկ բրդուճ արած,
Ու որը բոլոր կը մնար քաղցած։

Իրկուն տուն դարձին կասեր հորեղբոր.

«— Եսոր եվ որքա անցավ անոթի»։
— Ինչու, այ վորդի,
Սատանա մեր հանդերը լիքն են սինձ, բանջար,
Գաղե, կեր, ինչու կնաս անճար։

Կելներ Մհերը,
Գուշպերու մեջ կը սողոսկեր,
Ու վայրենի մեղուներու
Խորիսխն ազնիվ կը հավաքեր,
Կուտեր Մհեր ու կուժովնար։
Կը մագլցեր քերծերն ի վեր,
Արծիվներու վես ընկերեն
Կը հավաքեր ձրվերն ամեն,
Ծեռ քարերը իրար կուտար,
Բոց կըհաներ ժեռեն դնար,
Կրակ կաներ, կը խորովեր
Արծվի ձվեր,
Կուտեր Մհեր ու կուժովնար։
Կվոլորտեր վորսի համար
Շամբերու մեջ Անգղա գետի,
Անտառներով մութ ու մոլոր,
Առանց հունի, արահետի.
Ու կըվարդեր հովերու հետ
Փապերու սեջ ու վիհերու,
Ցետեն ընկած կրընկեվեթ
Վարազներու խենթ գիհերու։

Կելներ Մհեր լեռներու վեհ,
Հանց սուր աշտե,

Կատար ու քերծ, ամենաբերձ,
Ուր չի հասել վիթն իր վոտով,
Հավքն իր թևով,
Ու-կը ձևներ խանդով խրոխտ,
Արծվի պես,
Ազատ ու վեհ։

Գոռուն-գոչունով Անտոկա բալեն
Մեկ հեղ մեկ վեմ-քար
Փլել ու կուղար
Զոջանց վոչխարի փարախի վրեն։

Մհերն եր վազեց, թիկունքը հղոր
Քարին դեմ տվավ, քարը կանգ առավ,
Ու մինչև եսոր
Կըմնա կանգուն՝ փարախի գլխուն։

Իրկուն տուն դարձին՝ ասավ հորեղբոր.
—Սանա ժեռ քարեր շեղբերու նըման
Ցըրեխներն վոտիս՝ մաշեցին, կերան։

—Կարկըտի, հազի, ասավ նեղսրտած
Ճնճղատորիկ։
Քրթմնջաց Մհեր ու լարեց անահ
Ազեղն հոնքերու՝ հորեղբոր վրա։

«—Ես դեռն մեկ որ փորձանք պիտի գա,
Քաջք ե ածդահա, վիշապ զարհուրիկ,
Զի լսե սաստի, վոչ ել խրատիս։
Ահը սիրտն առած

Խոսեց կնոջ հետ Ճնճղատիրիկ։
Ու խորհուրդ արին,
Վոր մեկ պատճառով, հնար-հնճարով,
Վանեն Մհերին
Տնեն ու տեղեն.
Դավով ու խարով, մեկ անդարձ ճամբով,
Վտարեն իսպառ Սասունա հողեն։
Ու իրենց վորդին՝ Փոքրիկ-ճնճղիկ,
Վոր դեր կը սորվեր Մարութա սուրբ վանք,
Դարձնեն տեր-ժառանգ
Աղնանց աթոռքին,
Իշխան տիրական Սամանց աշխարքին։

Յելան ճամբեցին ջոջ-Վերգոյի հետ
Մանուկ Մհերին պարեն-պաշարով,
Կապուտկոզի բերդ,
Խանդուքթի հոր քով։

—Քո ջոջ պապ Մհեր,
Հորեղբայրն ասավ.
Քո կարոտն ունի,
Գնա, ժարդիկ տես, աշխարհ պտըտի,
Բան սորվի, վորդի»։

Ու յեկավ Մհեր, հասավ Կապուտկոզ,
Իրեն պապի հոզ։
Յոթ տարի ըսլոր Մնաց պապոնց տուն։
Մկունդ կըխաղար քեռիներու հետ,

Կելներ վորսասար,
Ու նրանց հավսար՝
Կռիվ կը մտներ՝ հագած ճոշ-ասպար։

Յեղավ վոր պապը որն հասավ, մեռավ։
Ու Թեվա-Թորոս՝ անդրանիկ քեռին,
Կանչեց Մհերին, ծաղրերես ասավ.—
«— Տո՛, տխմար Մհեր, դու չըգիտե՞ս վոր,
Քո հոր բուին եր Սասունը հզոր.
Քո հայրը ուներ տըկերով վոսկի,
Հոզեր ու գյուղեր, ավան ու ապատ,
Հուր-հրեղեն ձին,
Ու Թուր—կայծակին։
Դու հիմի անհոգ քաշ գաս մեր դռան.
Հորեղբայրդ ուտե քո հոբըդ գանձը,
Դու ոտար յերկիր մաշես քո անձը։
Վայ Զոլանց խելար, մուխրդ չմարի»։

Մհերն եր. յելավ
Լախտը ձեռքն առավ,
Ճամբան վոտքն առավ,
Վարգեց ու հասավ Բանձրաթոռ Սասուն,
Վոր յեկավ Սասուն, ծունր իջավ գետին,
Համբուրեց հողը Սասմա աշխարքին.
Ու սուրաց հանց նետ՝ դեպ Առյուծաբերդ,
Աղնանց հնութ յերդ։

Իրիկնաժամին մտավ դարբասն հոր,
Ու լցված սրտով ասավ հորեղբոր.—

— Ցեռ լինեմ Սասմա ժառանգ ու իշխան,
Ինձ եսպես ձգես ուրիշի դռան...

Խոսքը դեռ բերնին՝ Ճընճըղավորիկ
Վոտ դարկեց տափին,
Գոռաց ահռելիկ.
— Անիծվի են մարդ, վոր մեծ-սիրտ վորբին
Թեի տակ կառնի ի վերաշխարհին։
Լախտն առավ Մհեր՝ վոր դարկեր նրան,
Ձեռը չգնաց հորեղբոր վրան։
Դաղազեց սատանիկ Ճընճըղափորիկ,
Գոռաց ահռելիկ,
Ու մահակն առավ
Ծեծեց Մհերին, տնեն դուրս արավ։
Ցետ դառավ Մհեր, վոր դարկե նրան,
Նորեն Մհերի ձեռքը չգնաց
Հորեղբոր վրան։
Ու յելավ գնաց լալով, լաց-աղբով,
Ցեկավ հոր ու մոր գերեզմանի քով,
Թողուցուն խնդրեց հորեն ու մորեն,
Հեռացավ Սասմա հողեն ու ջրեն։

ԴԻԼՈՒՆ ՁԵՐՈՒՐՈՎԴ

— Մհեր զուրկ ու մերկ, ծարավ, անոթի
Ու վտարանդի,
Հեռուն աչքն առավ,
Ճամբան վոտքն առավ,
Գնաց ու հասավ Ճապաղջուրի դաշտ.
Վոր յեկավ հասավ Ճապաղջուրի դաշտ,
Տեսավ՝ ամառվա շոգին-կրակին,
Նստել է ծառի քաղցրիկ շվաքին
Հարուստ մարդու մին կնոջ հետ մեկտեղ,
Կը խմե գինին, կուտե ճրվաձեղ.
— Բարով քեզի, բարին քեզի,
Մհեր ասավ,
Անոթի յեմ, հաց տուր ուտեմ։
Հարուստն ասավ.— Արտս գնա,
Խլճերն հանե, քաղհան արա,
Բրտինք թափե, հաց կուտամ՝ կե։

Յեկավ Մհեր ճորտերու քով,
Տեսավ՝ ճորտեր

Յեղունդներով, ագուռներով
Ամիճ կը հանեն արտի հողեն,
Արտ կը մաքրեն, դուղձեն, կոշտեն,
Մոլախոտեն։
Ինքն ել նման ձեռնեց դործին,
Ծնկածալիկ, արևբոցին,
Մեկքակոտոր ու քրտնաթոր
Դատեց, բանավ մինչև իրկուն.
Յեղավ իրկուն,
Ճորտերու հետ դառ ու դադրած
Մտավ մեկ հյուղ՝ դեղ ու խավար,
Իրար վրա յեղան ծվար։
Մեկ ատուռճ հաց տըվին՝ ուտի,
Մեկ չոր խշտի պառկի, քընի։

Մհեր պառկեց, քուն չըտարավ.
Աչք չըփակեց ու վողջ գիշեր
Աշխարհի բան միտք կաներ միտք
Զոլանց Մհեր.

«Ռամիկ չարագատ
Զոր կուտե.
Հարուստ պարապ-մարդ
Մեղը կուտե»։

Առտուն կանուխ ճորտեր բոլոր
Յելան վոտքի,
Անխոս, անձեն կանգնան բանի։
Ու համբերեց մեկ-յերկու որ,

Վրա յերեքին
Խոսեց Մհեր մեջ իր մաքին.
«Ես էլ կյանք չե.
Ես չար մահ ե,
Հացն ու ջուրը ես պիղծ տեղի—
Ոձու լեղին...»

Լախտը ձեռքն առավ,
Ճամբան վոտքն առավ,
Գընաց ու մտավ Վոստանա քաղաք։
Ու մեկ փռնապան

Մհերին առավ իրեն ձեռքի տակ։
Մհեր որ բոլոր ջուր, փայտ կը կբրեր
Ու գիշերն անքուն՝ ալուր կըմաղեր,

Խմոր կը շաղվեր, խմոր կը գնդեր.
Գլուխը բարձեն, աչքը չըկպած՝
Կը կանգներ վոտաց։
Իր բաժին հացը չեր բավե իրեն,
Հաց կառներ կուտեր ձեռք ընկած տեղեն։

Փռնապան տեսավ,
Բարկացավ, ասավ.
—Տո, ծակաչք, ծակփոր,
Սասունա վիշապ.
Ի՞նչ մնաց՝ ծախեմ,
Կերար վողջ-բոլոր։
Աչքերը Մհեր խոլորեց վրան,
Վախեն ձեն ու ձուն կտրեց փռնապան,

Ու հացերն առավ, փակի տակ դրավ։
Մհեր մեկ մատով փականք կրկոտրեր,
Հացերը կուտեր։
Փռնապան նորեն սաստեց ու ասավ.
—Մհեր, դու ինչու՞ փականք կրկոտրես,
Հացերը կուտես։
Ուրիշի հացին իրավունք չունես,
Որբենք կա, որբենք,
Պատիժ կա, պատիժ։

Պողպատ իր ուսեր վեր քաշեց Մհեր,
Առավ զարմացած.
—Եդ պատիժ, որբենք յես չեմ հասկանա։
Բա ես որբենք ե՝
Դրժար բաները յես եմ անողը,
Համով բաները դու յես ուտողը,
Թե գանձ կապողը։

Ու Վոստանա քաղքեն Մհեր
Սիրտը խոլոր՝ չըվեց գընաց,
Յեկավ հասավ Լաթարա հող,
Մտավ մեկ գյող։

Ռեսն եր. առավ վեստ Մհերին,
Հանց վոր ճորտի, հացափորի,
Ճամբեց կոռի,
Ճամբեց կոռի դաշտն ու մերին
Ու այգեստան ավատի տան։

Որն է հասել,
Գեղջուկ, ռամիկ արտն են հնձել,
Հունձը փնջել, բերել կալսել
Եւ կալի մէջ դիզել շեղջ-շեղջ
Ցոլցալեն վոսկի ցորեն։

Ցեկավ հեռվեն մեկ ծեր գուսան,
Ձեռքին քընար՝ գանգ մի յեզան,
Ցեղջյուրներեն յերեք հատ լար
Քաշած՝ ի վար։

Բարեվ տվավ, նստավ խուրձին,
Զարկեց դաշն պիրկ լարերուն,
Փառքը յերգեց ավուր հացին։

«Փառք տվեք հացի
Ապա ասարծուն.
Հացն է աշխարքիս
Իսկն ազատություն։

Ասենք բուխ սրտով
Ռամկին արև շատ,
Գահոզ-շահոզին
Աշխարհ-արարատ։

Դովքն արեք ռամկին,
Ռամկի սուրբ գործին,
Ձեր ազատության,
Ձեր արդար հացին»։

А 5515 +405

Շարան-շարան յերկնուց իջան
Հավք ու թռչուն,
Ծվվացին շուրջը կալին
Ու բաժիններն առան թռան։

Ցեկավ իշխան են արտատեր,
Կիսեց տարավ ցորենի շեղջ,
Իրար յետնուց յեկան հասան
Թե գեղապետ, թե խանու թալան,
Առան տարան բեռով-թեռով,
Հարկի դիմաց, վաշխ ու պարտքին
Իր աչքի լույս ցորեն—վռակին։
Բան չըմնաց խեղճ ռամիկին—
Լոկ ծեղ ու կուտ կալատակին։

Ես վոր տեսավ՝ կրակ ու բոց
Բռնկեցավ Մահերին ծոց.
Ախ կը քաշեր որ ու գիշեր
Ու կը խորհեր մռայլ Մահեր։
«Ռամիկ, մշակ,
Դուք կը լցնեք
Մառան, մարագ
Հոր ու հնձան
Թե իշխանին, թե մեծատան,
Վոր անոթի, մերկ ի մորեն
Մնաք նորեն»։

Ռեսը կանչեց. ասավ—«Մահեր,
Հարկ տուր հիմի,
Գլխահարկ տուր թագավորի»։

— Ի՞նչ հարկ, ի՞նչ կոռ,
Ի՞նչ Թագավոր,
ԳաՀրաք ե տվել, կ՚ուզե հիմի,
Աստավ խիզախ Մհերն Ազնանց։

Ռեսը ձենեց, ձենին լեկան
Գեղ-գեղովի, ճորտ ու մշակ,
Ուսերով վար՝ փոկ ու ճոպան,
Անթերու տակ՝ բիր ու մահակ։

— Կապեք, տասավ, կապեք ձեռ-վոտ,
Յերկաթ զարկեք, տարեք ձգեք
Մութ բռնատուն։
— Վայ ձեզ, ճորտեր, խեղճ ու տխմար,
Ինձ զորավիդ կանգնելու տեղ
Վոստիկին դեմ ձեր հոգեատ,
Վերցրել եք զենն՝
Թափվել վրաս, հանց ձեր ահեղ
Թշնամու դեմ...
Մեկդի քաշվեք, մեկդի հիմի,
Ճամբա տվեք, թող ռեսը գա,
Թագավորի հարկը տանի...
Աստավ Մհեր,
Ու անտոիկ բիրդի նման
Կանգնավ մնաց։
Գեղ-գեղովի ձեռք զարկեցին
Մհեր բռնեն.
Մհեր հոնքեր ժողվեց իրար,
Լախտը փարտեց,
Ծայրը լախտին դիպավ սանդին,

Աղասանդը փրթավ տեղին,
Թռավ գնաց՝ կրակ կտրած,
Ու կըթռնի մինչև հիմի։
Նորշուին հղոր՝ լարած լախտին,
Շանթի նման փռեց գետին,
Փռեց գետին գեղապետին
Յոթըն որվա մեռելի պես։

Գեղ-գեղովի ես վոր տեսան,
Գումար փախան, յեղան ցրիվ,
Հանց չոր խոլիվ քամու ըերան,
Ծերպ ու ծործոր շունչերն առան»։

— Յելավ Մհեր սիրտը՝ խոլոր,
Միտքը՝ մոլոր,
Ճամբա ընկավ,
Ճամբան տեսավ՝
Սարի կանանչ մարմանդներով,
Ձորի մարմանջ աղբյուրներով,
Վայրի հավքեր ուրախ-զվարթ
Կը թռնեյին, ծափ կուտային,
Տաղով-խաղով, ուրախ-զվարթ։
Մհեր դարձավ՝ նրանց ասավ.
«Յերանելի ձեզ, վայրի հավքեր,
Դուք որհնած եք, մարդն անիծած,
Աղաս, անպարտ,
Ընկերներով ու աղվոր պես
Կ'ապրիք անհոգ ու սեր կանեք.
Վոչ արտատեր կըճանչնաք,

Վոչ հարկ ու կոռ, վոչ թագավոր,
Ցերանիկ ձեզ, վայրի հավքեր...»

Անձնահուր Մհեր
Զվեց ու հասավ Պղնձե-քաղաք։
Պղնձե-քաղքի պարիսպներ ու դուռ
Գինդ-պղնձակուռ.
Կամուրջ, բուրգ ու բերդ՝
Գինդ-պղնձակերտ։
Ժուռ յեկավ քաղքի գռեհ ու փողան
Հաղար մանեման.
Կանդ առավ մոլոր մեջ պողոտային
Առջև փառանցփառ մեկ ապարանքին.
Ցեսավ՝ վարպետներ բանձրիկ պատերեն
Կը կանչեն ամուր.
— Եհե՛յ, քար բերեք,
Շաղախ ու խիզար։
Բան վոքներ առած՝ ուսերնին—մեջքին,
Քարեր ահառիկ, դուլլեր ահագին,
Ու սանդուխներով վոլոր-վոլորուն,
Կ'ելնեն ու կ'իջնեն,
Ծնկներով՝ դեղեվ,
Սրտով՝ հեվիհեվ։

Ու տեսավ Մհեր մեկ տղա բանվոր՝
Քարը շալակին բանձրաքաշ տեղեն
Վար ընկավ դեսին ու յեղավ ցրեկ
Գլուխն ու ըղեղ...

— Ես վոր տեսավ Ազնանց Մհեր,
Հանց փոթորանք ծովու վրա,
Վոր հազարան վագրերու պես,
Գրմռմռա ու կը կորզե
Գատ ու պատնեշ,
Բորբ ու բորբոք դարձավ ասավ
Իրեն սրտին ու աշխարքին.
— Ե՛յ, դուք, մշակ, ճորտ ու բանվոր,
Կը շինեք հար դուրք ու դարպաս,
Ու ձեզ համար
Լուծ ու անուր, զնդան ամուր։

Ցերթամ շինեմ բերդ ու պատվար՝
Նեղ ու դժար որվա համար.
Առնեմ իմ հոր զենքերն ու ձին,
Ու Սասմանց տան կուռ կտրիճներ՝
Գովիս համար վիզ ու սատար,
Ցեղնենք գուպար
Աշխարքի դեմ զրկող ու չար.
Վոչչ ավերենք
Ու ռամկություն բերենք աշխարհ,
Ռամկի որենք ու իրավունք,
Վոր տեր զառնա ռամիկն իրեն
Սուրբ վաստակին, արդար հացին։

ՑԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ու կրակված թռավ Մհեր,
Յեկավ, յելավ
Սիմ ու Սասուն—Սասունա սար։
Սասունա սար՝ վեստ ու վիթխար,
Հանց յերկնամուխ
Ցըլի գլուխ,
Վոր կը փնչէ գոռ ու ահռելի
Բուք-մըրըրիկ։
Կիրճերու մեջ Սասմա գետեր,
Հանց մերկ ու կոռ կայծակ-թրեր,
Են ձյունափառ սեգ Ծովասար,
Վոր աստղերուն է հավասար։

Կը դեղերեր Մհեր անդուլ
Անգրդ գետեն մինչ Սեղան-սար,
Մարաթուքեն՝ Ծծմակաքիթ։
Ու կը փնտրեր բերդի համար
Քար ու կապան, լեռ, առապար,
Անկ ու հարմար։

Որանց մեկ որ՝ մութն ու մոլոր՝
Մեջ կապանին, խոր ծմակին,
Մեկ վագր վիրապ ու անագին,
Դեմ Մհերին խոպաց, վարգեց
Ու մոնչաց խոլ զարհուրիկ.
Մհեր լախտը քաշեց, զարկեց,
Ճեղքեց գանգը վագրի անոթիկ,
Միսը կերավ, մորթը ձգեց
Կուռ թիկունքին, գլխու վրան՝
Գիշտ ու խալամ։

Դատավ Մհեր մեկ խրոխտ լեռ
Մեջ բավիղին Մարաթուքա,
Ջերդ բանձրիկ գահ,
Կողն ու կռնակ՝ գուզձ յերկաթին,
Ուր կընայեն ամեն դին
Վիհեր մթին վեժ-անդունդին.
Քար ու կապան, լեռ առապար,
Բերդի հանար անկ ու հարմար։

Աղնանց Մհեր լախտն առավ ձեռ
Վազեց իջավ Տարոնա դաշտ.
Տարոնա դաշտ մեծ գետ ունի,
Խոր ու բըրոր,
Ու անունն է Արածանի.
Հարյուր քառասուն վտակ ու վետ,
Կը խառնվեն իրարու հետ
Ու կը հյուսեն Տարոնա գետ։

Տեսավ Մհեր՝ ջուրն է հորդել,
Վարար-վարար,
Ու կ'ավերե դեղ ու հանդեր,
Արոտ ու վար
Շինականին ու ռամիկին։
Խղճաց Մհեր, մբռնուռ սրտով
Վարդևց հասավ Բարքե սարին.
Մեկ սպառաժ վեմ վիթխարի
Ժեռ քարերեն Բարքե սարի
Մղևց, բերեց
Գլոր-գլոր,
Դղոր-դղոր
Բերեց ձգեց են դեռի մեջ։
Գետը բաժնեց երկու ճյուղի,
Մեկն աջ գնաց ու մեկը՝ ձախ։
Ջուրերն իջան,
Առաջվա պես աբեվերես
Յելան դեղերն ու հանդաստան
Շինականին ու ռամիկին։

Տարոնացիք ես վոր տեսան
Զարմացք տեսեն ջուր կտրեցան.
Փախան, մտան
Արեվ-Առինճ մեծ շահաստան,
Վիշապաբերդ, Արուրակեր։
Արուրի դուրք քառասուն նիգով
Իրենց հետնուց պինդ գոցեցին։

Մհեր հասավ լախտը ձեռին
Ու յոթին հեղ վորոտմունքով
Կոփեց բերդի դուրք արուրին,
Դոփեց դետին պողպատ վոտքով,
Ձենը ձգեց ահեղագոչ,
Ծխնու վրա դողաց դողդոջ
Դուրք արուրին։

«Ե՛յ Տարոնա իշխան-ջոջեր,
Ականթոթափ,
Ժողվեք բերեք, տվեք ինձի
Ձեր արծաթով, հացով-ջրով,
Հարուր վարպետ, վոր վեմ տաշեն,
Հարուր վարպետ, վոր պատ քաշեն։
Բերեք հազար բանվոր, մշակ,
Վոր քար կըրեն, յերկաթ կըռեն,
Բերեք հազար բանվոր, մշակ,
Վոր հող թալեն, արճիճ հալեն։
Բերեք թե վոչ, ձեր տուն ու տեղ
Ավեր կ'անեմ, հող ու ավուր,
Զորագին կուտամ՝ հողմերուն կուր։

Ու Մհերի վոտքը յեկան
Աղ ու հացով, խնդիրք-լացով,
Աբեվ-Առինճ քաղքի ջոջեր՝
Վաճառապետ ու դանձաշատ,
Ականթոթափ,
Բերին տվին հացն ու արծաթ,
Հարուր վարպետ, վոր վեմ տաշեն,
Հարուր վարպետ, վոր պատ քաշեն,

Բերին հազար բանվոր, մշակ,
Վոր քար կբրեն, յերկաթ կբռեն,
Բերին հազար բանվոր, մշակ,
Վոր հող թալեն, արճիճ հալեն։

Վարպետ-բանվոր Մհեր առավ,
Գումար տարավ
Բանձրիկ Սասուն, Սասմա աշխարհ,
Խոլ ու խոժոռ քերծի վրա։
Ու շինեցին հզոր քերծին
Բերդ ու պատվար, զերդ կուռ ասպար,
Կայծակ քարով ու վորձ քարով.
Կամրջակապ փապ ու վիրապ։
Արճիճ լցրին կրի տեղակ
Մեջ հիմերուն,
Արճիճ լցրին խիճի տեղակ
Մեջ վորմերուն։
Կանգնեցրին դռռ աշտարակ
Սուր սնարին՝ վես ու անել,
Ուր լոկ արծվի թեռն ե դիպել։
Աղիս ու նիգով մուխ յերկաթի
Դուռ-դռանդի։
Ու շինեցին խըրոխտ բուրգեր՝
Բանձր ու բոլոր,
Գատուհաններ՝ աչքով խոլոր,
Կը նայեցին ճամբաներուն
Վոլոր-մոլոր,
Թե հեռավոր, թե մոտավոր։

Ու անունը բերդի դրամ՝
«Մհերի Քենդ».
Անունը սոսկ, բերդի վրան
Մինչև հսոր սպառազեն
Գոռ պահապան։

Գնաց Մհեր՝ բարկ ու կըրակ,
Իջավ Սասմա Ամրոց-քաղաք.
Արև նոր եր ամքը բացել,
Վողջ յերկինքն եր ծով-ծիրանի,
Ծուխը կ'ելներ պալան-պալան
Ակուռներեն ու յերդեներեն։
Ու որն հսոր տոն—կիրակի,
Ժամն եր կանգնած պատարագի։
Մհեր մտավ Աստուծարերդ,
Զոջանց իր տուն,
Յոթը կողպեք պատուհանեն
Հանեց Դավթի դրահ ու վերտ,
Վոսկի գոտիկ՝ յոթը պատիկ.
Վահան լանջին,
Վառ սաղավարտ դրավ գլխին,
Կապեց մեջքին
Թուր—Հավլունին, Թուր—Կայծակին։
Յելավ վոտքով դարկեց գոմի
Տասը նիզով աղխուկ դռան,
Ընկավ ջախջախ ու ծիանհան
Դուռն յերկաթի.
Հանեց Դավթի
Ձին հրեղեն՝ բռնած բաշեն։

Ձեռքը նյուսին դրավ՝ հեծնի,
Ճնճղուփորիկ հասավ ժամին,
Յեկավ մթնած՝ վրան թնդաց.
Ու արմուկեն քաշեց կատղած.
«Զրվիս, Մահը,
Քար, անտառակ,
Նաշըդ տեսնեմ,
Գետինն անցնեսա»։
Հանց արմուկով հրեց Մահը
Հետա հորեղբոր,
Արմուկն առավ ակռաներուն
Ու ակռաներն յեղան փշուր
Հետա հորեղբոր։

Հեծավ Մահերն արևադուն,
Հեծավ խթեց հրեղեն ձին։
Թռավ կանգնեց քաղաքամեջ.
Աչ ու ձեռքին
Հազարաշող Թուր—կայծակին։
Հանց գոռ-ամպրոպ Անդուկ լեռան
Կը կայծկլտե—կը վորոտա,
Գոռաց Մահը Սասնու վրան.
— Ե՛յ դուք, Սասմա ծռեր ու ճետ,
Ե՛յ դուք, գեղջուկ, մշակ ու հորտ,
Ձեռնել գիտցող նիզակ ու նետ,
Ձեռնել գիտցող դուրզ ու գեղարդ.
Թող ամենքը ասպազինվեն,
Գան ինձի հետ—
Քանդենք հիմեն աշխարքը չար
Ու ռամկություն բերենք աշխարհ,

Ռամկի որենք ու իրավունք,
Վոր տեր դառնա ռամիկն իրեն
Արդար հացին, սուրբ վաստակին։

Ու յետ յեկավ Մհերի ձեն
Սալոնո ձորեն, Ծոփայ Դուռեն,
Ճապաղ Զուրեն, Մշու Դուրեն,
Խութա Բարեն, Գրգուռ սարեն,
Փալեց նորեն
Գոռգոռալեն, հաղարաձեն,
Սասնո վըրեն։

ՁՈՐԴՈՐԴ ԳԼՈՒԽ

Զոչ տան պետեր, խոլ հսկաներ—
Ձենով Ոհան ու Խոր Գուսան,
Թառ—Ճնճղուկ ու Խոր - Մանուկ,
Վժիկ—Մխո, Բռնած—Կուռիկ,
Զոչ - Վիրապ ու Ճոպ - Վիրապ,
Վոստանիկներ ու Սեպուհներ,
Ու Ազատներ ու Ավատներ,
Հագած-կապած վերտ ու վահան,
Սուր ու աշտե, տեղ ու նիզակ,
Իրենց առջևը առած-բերած
Հոծ ժողովուրդ—գեղ ու քաղաք.
Գեղջուկ, մշակ, ճորտ ու ռամիկ,
Հագած—կապած զրահ շապիկ,
Գունդ ու ջկունդ, պարս ու աղեղ,
Գրոհ տվին, յեկան մեկտեղ
Դեմ Մհերին ու ձենեցին.—
— Ե՛յ դեվ Մհեր,
Վար եջ ձիեն, ժամտուն գընա,
Լաց, որոտա, ու դարձ արա
Խորհուրդներեն չար սատանին։

Կոթով կուզես... Մեղքը վերեղ,
Ետոր և եթ
Քեզ կը խառնենք հազար տարվա
Մեռելոց հետ...

Մհեր կեցավ անպատասխան,
Անպատասխան լեռ անտասան,
Բոլոր մեկտեղ դառան յետ-յետ,
Բոլոր մեկտեղ կանգնան մեկեն,
Բոլոր մեկտեղ սալ ու գետին
Վոտներով պիրի՝ պինդ դոփեցին,
Տեգերով կուռ հանց կովի կանչ
Վոտանները պինդ կոփեցին,
Թինդ ու թափով թռան առաջ,
Շկահելով, դոզոռալով,
Հոդմի նման խիստ խոյացան,
Յեկան վեռ-վեռ ու իրենց հետ
Ամպ ու փոշի, մուդա ու մղեղ,
Գառութ ավին,
Գառութ ավին,
Կուռ կռուվներ ցցած ահեղ,
Թռան, յեկան, յեկան հասան՝
Մհեր դլխեն,
Մհեր ճամլեն,—
Մհեր խթեց Ձին հրեղեն
Ու մխրճվեց մեջ ամբոխին.
Ձեղքեց ամբոխն յերկու մասի,
Մեկն աջ թալեց ու մեկը ձախ.
Դեսն՝ արևցաթ, կեսն՝ արևպատ,
Մղեց, յեկավ, կանգնավ խիզախ
Դեմ-հանդիման, ճակատ-ճակատ,

Իշխաններուն, Սեպուհներուն,
Ավատներուն, Ազատներուն,
Հաշեց զարկեց Թուր—Հավլունին,
Թուր—Հավլունին, հանց հուր—կայծակ
Մեջ մթագին ամպ ու գամպին,
Կարեց, թափեց,
Այրեց, լափեց
Ով վոր ընկավ Թրի վրան,
Ինչ վոր ընկավ հրի բերան։
Աբյունն յեկավ գոչ-գոչ գնաց...
Մնացածներ գուռար փախան,
Յեղան ցրիվ, հանց չոր խոիվ...

Սև ապտակի մռայլ կառանչ՝
Սև լուրն հասավ Սասմա ականջ։
Իշխան, ջոջեր, ժամերեցներ
Յեկան ժամի կուչնակ տվին.
Ու չորս գիեն ծեր-հալեվոր,
Մեր ու մանուկ, աղքատ, հարուստ
Ժամ ժողվեցան, նորեն յեկան,
Ալիք-ալիք ծովու նման,
Իշխան, ջոջեր, ժամերեցներ
Ծով կապեցին ժամի բոլոր։
Ու իրենց հետ յերդումարդով
Սասուն լման
Նզովք արին գոռ Մհերին.
— Անիծվես դու,
Զարը՛դ Մհեր,
Դու, ներհակ նեռ,

Դու, դեվ ցաամանն,
Դու, վոր կուլես՝ աշխարհ քանդես,
Ծարավ մընաս ու անոթի,
Անճետ մընաս ու անորդի,
Մահ ուղենաս, չգտնես մահ,
Մինչև Քրիստոս դատաստան գա՝
Քո դատ կըտրի։

Ու անեծքը հասավ բռնեց
Մհերին։
Դեռ ինն ել չեր կարող տանի
Մհերին։
Ձիու վոտքը ծունկերն՝ ի վեր
Հողերու մեջ կը մխրճվեր։
Մհեր ուժով, ուժով-զորով
Հասավ հոր-մոր գերեզմանին,
Գրկեց հողվարքն ասավ լալով։
— Վեր յել, հերիկ,
Վեր յել, մերիկ,
Մեկ ճար արեք
Ձեր Մհերին։
Ու հերն ու մեր գերեզմանեն
Լացին, ասին.
— Գնա, վորդի, Տոսպան բլուր,
Ագռավու այր,
Ու քար քաղե, ավաղ մաղե,
Լաց ու դղյա,
Վոր Քրիստոս քեզի խղճա,
Թողություն տա։

Յերկիրն և չեր ուզի տանի
Մհերին։
Արեգակն ել՝ աչքի նման
Մեռելին,
Գաղ կընայեր ու լույս չեր տա
Մհերին։
Ձիու վառքը ծունկերն ի վեր
Հողերու մեջ կը մխրճվեր.
Ուժով—զորով գնաց Մհեր,
Յեկավ հասավ Վանա ծովուն։
Ագռավու Քար բացվեց մեկեն,
Առավ-կալավ մեջ իր ծոցին
Մհերն ու Ձին։
Ագռավու Քար գոցվեց նորեն
Նըբա վըրեն։

Մեջ անձավին անմահ, անմեռ,
Կա ու կապրի Ցասման Մհեր,
Գլխու վերև—նըստեմ ճրագ՝
Դիշեր-ցերեկ հավիտյան վառ.
Ամած ջուրը՝ մեկ ըսկանակ.
Հացը որեն՝ յերեք նշխար։
Մեկ խուրձ առուլ Ձիու առաջ
Ամառ-ձմեռ դալար—կանաչ
Ու կըմտաքե անմահ Մհեր
Աշխարքի բան.
Աշխարքի բան, հանց վոր իժ-ոձ,
Կը խեթըթե սիրան ու հոգին։
Ու վոչ կուլա, վոչ կը դղվա,

Վոր Քրիստոս խղճա-կիթա,
Վես արարքին թողութիւն տա։

Ու թիւ կուգան
Բարդ-բարդ ամպեր՝ հրով-ջրով,
Լույս Մասիսի վեհ գագաթեն,
Սրվան սարեն, Ծիսան ծովեն,
Կայծակ կուտան
Ագռավու լերկ Քարի վրեն
Ու Մհերի գոց Դուռն ի վեր,
Կը գոռգոռան, կը վորոտան,
Փքթրին կերթան։

Մհեր այրեն, Քարի խորեն
Ելոլ կը թնդա, դղորդ կուտա
Բարկութենեն։
Կը վրընչա ու կը գոփե
Ջին սանձակոծ, կրակ ու ծոց,
Ու կը ժաժեն Մհեր ու Ջին
Աշխարհն հիմքեն։

Ամեն տարի որն Համբարձման,
Յերբ իրարու համբույր կուտան
Յերկինք-յերկիր ու հուր ու ջուր,
Ամեն տարի որն համբարձման,
Յերբ կը բացվի ամեն փակ դուռ,
Կը վախենան գեղ ու քաղաք,
Թե կը բացվի Ագռավու Քար,
Կելնե Մհեր արև-աշխարհ։

Գեզ—գեղովի, քաղաք-քաղքով,
Արտասուքով
Կը պաղատեն Քրիստոսին՝
Զար Մհերին կապե-բանդե,
Վոր դուրս չգա՝ աշխարհ քանդե։

Մեկ Համբարձման որ, յերբ Մհերի Դուռ
Նորեն բաց յեղավ, Ագռավու անձավ
Մեկ ծերոն հովիվ ներս մտավ, տեսավ՝
Մեկ պարքին վեմ-մարդ՝
Գլխին սաղավարտ,
Հեծած կրակ Ձին,
Կայծակը ձեռին,
Մթան մեջ կանգուն։

Հարցուց,—Ո՞վ ես դուն։
— Մհերն եմ յես, Դավթի տղան,
Դու, հալեվոր, ուստի կուգաս։

— Լուս աշխարքեն, հովիվն ասավ։

— Աշխարքն ինչ է, ինչպես վոր եր.
Հարցուց Մհեր։

— Հա, ենպես է, ինչպես վոր եր.
Համբավ տվավ հովիվը ծեր։

— Նորեն ռամիկ դառ կը դառի,
Աշխարհ կուտե,

Ու կը մնա ինքն անոթի,
Հարցուց Մհեր։

— Հա՛, եղբա՛ր է, Աղնանց Մհեր։

— Դե՛, դարձ գնա՛ քո չար աշխարհ,
Խոր դաշրութքով տասվ Մհեր։

— Դու յերբ պիտի դուրս գաս աշխարհ,
Հարցում արավ հոմիվը ծեր։

— Յերբ շեղբն հասնի
Վոսկորին,
Ռամիկ կանչե
Մհերին։
Պատգամ տված Յասման Մհեր։

Ու դուրս յելավ հոմիվին այրեն,
Ագռավու Քար դոցվեց նորին։

Մինչև հսոր դեռ
Ենտեղ է Մհեր.
Հուրնի Զին հեծած,
Սաղավարտ կապած,
Կայծակն աջ ձեռին,
Վահան՝ ձախ ձեռին,
Հագած կուռ ասպար.
Միշտ ու միալար

Կըսպասե անենին՝
Հոգին ականջին
Ու ականջը՝
Ամէն կանչին

Վ. ԵՐԶ — ՑԵՐԳ.

Են որեն վեր անցան դարեր,
Ցերը ռամկասեր Մհերը վեռ՝
Անձավի մեջ բանդվեց անել.
Անցան հազար տարիներ չար,
Նորեն հազար չար տարիներ,
Դառն ու դաժան, մութն ու մլար։
Ռամիկը, հանց ճորտ ու ստրուկ,
Բանվոր, մշակ, գերի-գրատ,
Կ'տառապեր ու կ'աշխատեր,
Կ'տառապեր ու կը տքներ
Արքաներու, իշխաններու,
Սեպուհներու, հարուստներու
Շահի համար անհագ, անկուշտ։
Ամենուրեք ու ամեն տեղ
Կ'չարչարվեր անդուլ, անխոնջ,
Ծովերու մեջ ու բովերու,
Բարկ ու կրակ արևի տակ,
Սառնամանի հողմերու տակ,
Ու կմնար նորեն-նորեն
Խեղճ, անոթի, մերկ ի մորեն,
Անիրավունք ու անբաժին։

Տարվա տարի ու սրա որ
Լուծը դաժան՝
Զար բռնության
Կը ծանրանար
Ռամկի վրան։
Ա՜խ մինչև վոր շեղբը հասավ,
Հասավ ռամկի չոր վոսկորին։

Յերբ շեղբն հասավ չոր վոսկորին
Ահեղ ցավեն ճըչաց ռամիկ
Քաղաքներեն ու գյուղերեն,
Ու ծովերեն ու բովերեն,
Դարբնոցներու հրեն-բոցեն
Ճորտ ու ըստրուկ, բանվոր, մշակ,
Աղքատ ու զուրկ ձեն տվեցին
Մահի պատրաստ, ռազմահրավեր,
Ձեն տվեցին ու կանչեցին
Վեռ Մհերին։
Ամեն դիեն կանչերը հուր՝
Հաղար, հաղար, հաղար ու բյուր,
Հանց ծովերու դոռ ալիքներ,
Յեկան, յեկան ու կոփեցին
Մհերի Դուռ, Ագռավու Քար։

Լսեց Մհեր մեջ անձավին
Կանչերը հուր, հաղար ու բյուր՝
Մահի պատրաստ, ռազմահրավեր.
Բաղուկն յերկաթ պրկեց Մհեր,
Խոլ մրրկվեց սիրտն ու հոգին,

ոլ վրընջաց Զին հրեղեն
Ու ժաժեցին աշխարհ հիմեն
Ու ճեղքեցին քար-ապառաժ,
Թուր—Հավլունին կայծակ տվավ՝
Դոռ կայծակներ ահեղաթափ,
Խորտակեցին կապանք ու դուռ,
Յելավ Մհեր արև-աշխարհ։
Ու վարդեցին, թոռն, յեկան
Հաղար-հաղար, հաղար ու բյուր
Ճորտ ու ըստրուկ, բանվոր, մշակ,
Ամեն դիեն թոռն, յեկան
Նորեն հաղար, հաղար ու բյուր
Ճորտ ու ըստրուկ, բանվոր, մշակ,
Ծով կապեցին Մհերի շուրջ,
Ծով կապեցին փոթորկաշունչ.
Գրոհ տվին բոլոր մոկտեղ՝
Աբքաներու, խշխաններու,
Սեպուհներու, Ավատներու,
Հարուստներու վրա մեկտեղ.
Ավերեցին աշխարհը չար,
Ու ռամկություն բերին աշխարհ,
Ռաձկի օրենք ու իրավունք,
Վոր տեր դառնա ռամիկն իրեն
Սուրբ վաստակին, արդար հացին։

ԽՍՀՄ—ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ժրենվ 1919, Յերեվան 19[illegible] թ.

Գլխ. խմբագիր՝ Ս. Իրատ
Տեխ. խմբագիր՝ Ս. Ա. Ալիխանյան
Սրբագրիչ՝ Ա. Արզաքանյան

Գլավլիտի լիազոր՝ Ա. - 3053. Հրատ. 4412.
Պատվ. 1360. Տիրաժ 6000.
Թուղթ 74×110, տպ. 2 3/4 մամ.
Մեկ մամ. 51,200 նիշ. հեղինակ. 1 3/4 մամ.
Հանձնված է արտադրության 23 դեկ. 1937 թ.
Ստորագրված է տպելու 25 փետրվարի 1938 թ.
Գինը 2 ռ., կազմը 1—60 կ.

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի փող. 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0040981

1 36

A I 5515